ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՀայաստանիՀանրապետության Շիրակիմարզի Անիհամայնք
ՀայաստանիՀանրապետությանՇիրակի մարզ, քաղաքՄարալիկ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 224-Ա

17 հունիսի 2021 թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ /ԲՆԱԿԱՎԱՅՐ՝ ԲԱԳՐԱՎԱՆ/ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի» դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2021 թվականի հունիսի 08-ի թիվ 42 որոշումը. *որոշում եմ.*

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող /բակավայր՝ Բագրավան/ սույն որոշման N 1 հավելվածում նշված գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտ հողատեսքի հողամասի օտարման աճուրդն անցկացնել՝ 2021 թվականի հուլիսի 20-ին, ժամը 12:00-ին, իսկ երկրորդ աճուրդը (կրկնաաճուրդը)՝ 2021 թվականի հուլիսի 27-ին, ժամը 12:00-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի երաժշտական դպրոցի շենքում (հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ, Մաղաքյան 2):

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի մշտական գործող աճուրդային հանձնաժողովին (նախագահ՝ Արտակ Գևորգյան).

1) Աճուրդի անցկացումից մեկ ամիս առաջ <<Հայաստանի Հանրապետություն>> օրաթերթում, Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային www.azdarar.am կայքում և զանգվածային լրատվության այլ միջոցներով հրապարակել հայտարարություն՝ սակարկությունների անցկացման տեղի, օրվա, ժամի, հողամասի գտնվելու վայրի, ծածկագրի, մեկնարկային գնի, օտարման նպատակի, չափի, ինչպես նաև տվյալ հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայության մասին:

2) Հողամասի աճուրդը կազմակերպել՝ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 68-70-րդ հոդվածներով, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

3. Հաստատել հրապարակային սակարկությունների հայտարարության տեքստը՝ համաձայն N 2 հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021 թվականի հունիսի 17
քաղաք Մարալիկ

ՀԱՎԵԼՎԱԾ N 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 17-Ի ԹԻՎ 224-Ա ՈՐՈՇՄԱՆ

# ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ (ԲՆԱԿԱՎԱՅՐ ԲԱԳՐԱՎԱՆ) ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆՆ ՈՒ ԱՃՈՒՐԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| N | Հողամասի գտնվելու վայրը | Հողամասի ծածկագիրը, իրավունքների պետական գրանցման վկայական N | Հողամասի մակերեսը (հեկտար) | Հողամասի նպատակային նշանակությունը | Հողամասի գործառնական նշանակությունը, հողատեսքը | Հողի որակական հատկանիշը | | Օտարման նպատակը | Հողամասի նկատմամբ սահմանափակումների (նկարագիր՝ սերվիտուտների առկայությունը) | Օտարման եղանակը | Տվյալ հողամասի մեկ հեկտարի կադաստրային արժեքը (ՀՀ դրամ) | Հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը՝ կադաստրային արժեքի նկատմամբ (%) | Տվյալ հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը (ՀՀ դրամ) | Աճուրդի դրված հողամասի նախավճարի չափը՝ մեկնարկային գնի նկատմամբ (%) | Աճուրդի դրված հողամասի քայլի չափը մեկնարկային գնի նկատմամբ (%) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Հողի կարգը | Ջրովի, անջրդի | | | | | | | | |
| 1. | ՀՀ Շիրակի մարզ, բնակավայր Բագրավան | 08-022-0159-0006 26052021-08-0039 | 20.30045 | Գյուղատնտեսական | Արոտ | V | Անջրդի | Գյուղատնտեսական գործունեության իրականացում | Չկան | Բաց աճուրդ | 90 000 | 60.0 | 1096224 | 5 | 5 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ N 2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 17-Ի ԹԻՎ 224-Ա ՈՐՈՇՄԱ

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ (ԲՆԱԿԱՎԱՅՐ ԲԱԳՐԱՎԱՆ) ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Աճուրդի կազմակերպիչը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարան:
Աճուրդի անցկացման օրը՝ 2021 թվականի հուլիսի 20-ին, ժամը՝ 12:00-ին:
Երկրորդ աճուրդի (կրկնաաճուրդի) անցկացման օրը՝ 2021 թվականի հուլիսի 29-ին, ժամը՝ 12:00-ին:
Աճուրդի և կրկնաճուրդի անցկացման վայրը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկի երաժշտական դպրոցի շենք (հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Մարալիկ, Սաղաթյան 2):
Աճուրդի մասնակցության հայտերի ընդունման վերջնաժամկետը՝ 2021 թվականի հուլիսի 16-ին ժամը՝ 18:00:
Երկրորդ աճուրդի (կրկնաաճուրդի) մասնակցության հայտերի ընդունման վերջնաժամկետը՝ 2021 թվականի հուլիսի 23-ին ժամը՝ 18:00:
Աճուրդի մասնակցության վճարի չափը՝ 5000 (հինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
Աճուրդի նախավճարի չափը՝ մեկնարկային գնի նկատմամբ 5%:
Գնային առաջարկի նվազագույն չափը՝ մեկնարկային գնի նկատմամբ 5%:
Աճուրդի անցկացման եղանակը՝ բաց հրապարակային սակարկությունների եղանակ:
Աճուրդի հաղթող է ճանաչվում ամենաբարձր գին առաջարկած մասնակիցը:
Այլ մանրամասների համար դիմել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարան՝ աճուրդային հանձնաժողովին:
Աճուրդով օտարվող գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտ հողատեսքի հողամասի տվյալները, մեկնարկային գինն ու պայմանները՝

| N | Հողամասի գտնվելու վայրը | Հողամասի ծածկագիրը, իրավունքների պետական գրանցման վկայական N | Հողամասի մակերեսը (հեկտար) | Հողամասի նպատակային նշանակությունը | Հողամասի գործառնական նշանակությունը, հողատեսքը | Հողի որակական հատկանիշը: Հողի կարգը | Հողի որակական հատկանիշը: Ջրովի/ անջրդի | Օտարման նպատակը | Հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը | Օտարման եղանակը | Տվյալ հողամասի մեկ հեկտարի կադաստրային արժեքը (ՀՀ դրամ) | Հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը՝ կադաստրային արժեքի նկատմամբ (%) | Տվյալ հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | ՀՀ Շիրակի մարզ, բնակավայր Բագրավան | 08-022-0159-0006 26052021-08-0039 | 20.30045 | Գյուղատնտեսական | Արոտ | V | Անջրդի | Գյուղատնտեսական գործունեության իրականացում | Չկան | Բաց աճուրդ | 90 000 | 60.0 | 1096225 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ